ԳԻՏՆԱԿԱՆԻ ՍՏՈՐՈՒՄՆԵՐ

ՏԻԳՐԱՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության բաժնի պետ,
ՔՀՇ 1-ին դասի խորհրդական,
քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Ժամանակակից մանկավարժական գիտության մեջ կրթությունը ամենաընդհանուր մոտեցմամբ ներկայացվում է որպես հիմնարար, այդ թվում՝ բազային մասնագիտական գիտելիքների փոխանցում սովորողներին, վերլուծական մտածողության ձևավորումը վերջիններիս հիշողության մեջ տարբեր բնագավառներից փաստերի ամրագրմամբ և այդ փաստերի միջև փոխադարձ կապերի որոշակի համակարգի ձևավորմամբ, այսինքն՝ ապագա կադրերի նախապատրաստումը անհայտ իրավիճակներում գործելուն: Միաժամանակ, առանձնացվում են նաև ուսուցման գործընթացները՝ նպատակաուղղված վարքի կոնկրետ հմտությունների ու որակների ձևավորմանը, այն է՝ ապագա կադրերի նախապատրաստումը որոշակիորեն հայտնի կամ նման իրավիճակներում գործելուն:

Հոդվածում հետազոտվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության համակարգի կրթական կառուցակարգերի կայացման ուղին, ազգային կրթական փորձի և ռազմակրթական ոլորտում տեղի ունեցող միջազգային զարգացումների հիման վրա իրականացվող հայեցակարգային բարեփոխումները, ինչպես նաև վերլուծվում են ռազմական կրթության համակարգի զարգացման նախանշվող ուղիները:

Հեղինակի կողմից եզրահանգում է արվում, որ ՀՀ ռազմակրթական համակարգը ներկայումս գտնվում է ակտիվ զարգացման գործընթացում և պաշտպանության ոլորտի կադրային պատրաստության զարգացումն ընդգրկված է պաշտպանության բնագավառի բարեփոխումների համատեքստում գերակա առաջնահերթությունների շարքում:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ պաշտպանական բարեփոխումներ, ռազմական կրթություն, հայեցակարգ, զինծառայող, ռազմաուսումնական հաստատություն, աստիճանակարգված կրթական համակարգ, ռազմական գիտություն, մասնագիտական պատրաստություն:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային ոլորտներում ընթացող բարեփոխումների պայմաններում անհրաժեշտ է մշակել և իրականացնել համալիր միջոցառումներ՝ ուղղված զինված ուժերի մարտունակության բարձրացմանն ու արդի մարտահրավերներին դիմակայելու կարողության ապահովմանը: Նշված բարեփոխումների ար-

դյունավետությունը կախված է մի շարք խնդիրների հաջող լուծումից, որոնցում առաջին հերթին կարելի է ընդգծել զինված ուժերի կառուցվածքակադրային համակարգի կատարելագործումը՝ նպատակ ունենալով ապահովել երկրի ռազմական անվտանգությունը երաշխավորող բանակ [1]:

Նախկին խորհրդային մյուս հանրապետությունների հետ գրեթե միաժամանակ, սակայն առավել անբարենպաստ պայմաններում ձեռնամուխ լինելով ազգային բանակի ստեղծմանը, Հայաստանը կարողացավ աներևակայելի կարճ ժամանակահատվածում ստեղծել կարգապահ ու մարտունակ զինված ուժեր, որոնք ներկայումս իրենց մարտական պատրաստության մակարդակով, բարոյահոգեբանական վիճակով առաջիններից են ԱՊՀ–ում, իսկ Հարավկովկասյան տարածաշրջանում համարվում են ամենամարտունակն ու առաջավորը [2]: Միաժամանակ, հարկ է փաստել, որ ԽՍՀՄ կազմում եղած տարիներին Հայաստանը միութենական հանրապետություններից միակն էր, որի տարածքում չկար որևէ ռազմակրթական հաստատություն: Բացի այդ, նախկին ԽՍՀՄ բանակի մարտավարությունն ու ռազմավարությունը ոչ ամբողջությամբ էին համընկնում հայկական ռազմակրթական հնարավորություններին:

1994 թվականի հունիսից հետո ընթացող ժամանակաշրջանը ընդունված է անվանել բանակաշինության, կայուն զարգացման, զորքերի մարտունակության բարձրացման, կարգապահության ամրապնդման, սպայական անձնակազմի պատրաստման ու վերապատրաստման, ինչպես նաև բանակ–հասարակություն հարաբերություններում առկա անջրպետի տարեցտարի վերացման շրջան, երբ հաստատված զինադադարից հետո երկրի իշխանությունները հնարավորություն ստացան արդեն խաղաղ պայմաններում ջանքերը կենտրոնացնել բանակի՝ որպես պաշտպանական ամբողջական համակարգի վերջնական ձևավորման, բոլոր անհրաժեշտ ստորաբաժանումներն ստեղծելու և զարգացնելու ուղղությամբ:

Սկզբնական շրջանում ԵՊՀ ռազմագիտական ամբիոնի հենքի վրա կազմավորվեց ՀՀ ՊՆ բարձրագույն զինվորական ուսումնարանը [3], ստեղծվեց ռազմաավիացիոն թռիչքատեխնիկական ուսումնարանը [4]: Արդյունքում հետագա տարիներին ձևավորվեց ՀՀ ռազմական բուհերի համակարգը, մասնավորապես, ՀՀ ՊՆ բարձրագույն զինվորական ուսումնարանը վերակազմավորվեց Ռազմական ինստիտուտի [5], իսկ ռազմաավիացիոն թռիչքատեխնիկական ուսումնարանը՝ Ռազմաավիացիոն ինստիտուտի:

ՀՀ զինված ուժերի ռազմաբժշկական պահանջարկի և ռազմակրթական առանձնահատկությունների հաշվառմամբ ՀՀ կառավարության 1994 թվականի մայիսի 19–ի թիվ 232 որոշմամբ Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժծառայության կազմակերպման և արտակարգ բժշկության ամբիոնի հիմքի վրա ստեղծվեց ռազմաբժշկական ֆակուլտետը [6]: Համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 15–ի թիվ 1716–Ն որոշման՝ «Ռազմաբժշկական ֆակուլտետը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համար պատրաստում է ռազմաբժշկական բարձրագույն կրթությամբ սպաներ, կազմակերպում է հետբուհական և հետդիպլոմային մասնագիտական կրթություն, պատրաստում է ֆակուլտետի համար գիտամանկավարժական կադրեր և կազմակերպում է գիտահետազոտական աշխատանքներ» [7]: Այս բոլորի

վերջնարդյունքում ձևավորվեց ՀՀ ռազմական կրթության համակարգը, որը ներկայումս գտնվում է ակտիվ զարգացումների և բարեփոխումների փուլում:

Ռազմարվեստի, ռազմական գիտության ու տեխնիկայի զարգացման արդի մակարդակը, ինչպես նաև Հայաստանում հանրակրթական համակարգի առկա դժվարությունները թելադրում են, որ ապագա զինվորականի պատրաստման գործընթացում պետք է շեշտադրվի ռազմական թեքումով դպրոցների դերակատարությունը: Այդ հաստատությունների սաներն ընդհանուր միջնակարգ կրթության հետ միասին արդեն ունենում են նաև միջնակարգ ռազմական կրթություն, ֆիզիկապես, մտավորապես ու հոգեբանորեն պատրաստված են հետագա ուսման և ծառայության համար: Այդ շրջանավարտների հիմնական մասը (բարձր առաջադիմություն ցուցաբերողները) միանգամից կրթությունը շարունակելու է բարձրագույն ռազմաուսումնական հաստատություններում:

Ռազմական ոլորտի բարեփոխումների կարևորագույն մասը բուն զինված ուժերի վերակառուցումն է, որը ներառում է զորքերի և կառավարման մարմինների հետագա կառուցվածքային կատարելագործումը, զինված ուժերի մարտական կարողությունների, ազդարարման և կառավարման համակարգի օպերատիվության և կայունության բարձրացումը, ժամանակակից կատարելագործված զինատեսակներով բանակի սպառազինության համալրումը: Յուրաքանչյուր պետություն իր ռազմական անվտանգության ապահովման համար անհրաժեշտ ռազմական հզորության չափը որոշում է՝ ելնելով երկրին սպառնացող առկա և հնարավոր վտանգի ծավալներից, իր տնտեսական հնարավորություններից, տարածաշրջանային ու միջազգային իրավիճակից, ուժերի տարածաշրջանային հաշվեկշռից, ընդհանուր և տարածաշրջանային անվտանգության համակարգում իր ստանձնած պարտավորություններից: Այս գործոնների հաշվառմամբ են մշակվում զինված ուժերի զարգացման ընթացիկ և հեռանկարային ծրագրերը, դրանցով են պայմանավորված ռազմական շինարարության շատ հարցեր, այդ թվում նաև ԶՈՒ–ի անձնակազմի թվաքանակի սահմանումը, համալրման կարգի որոշումը:

Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից 2007 թվականի հունիսին հաստատված ՀՀ պաշտպանական բարեփոխումների 2007–2015 թվականների ծրագրի շրջանակներում առանձնակի ուշադրություն պետք է դարձնել նաև զինված ուժերում զինվորական ծառայության նյութական խրախուսման հարցերին: Միամտություն և կարճատեսություն է այսօր մտածել, որ շուկայական հարաբերությունների պայմաններում սպայի ծառայության հիմնական խթանիչը միայն ծառայողական խանդավառությունն է ու հայրենասիրական մղումը: Զինծառայողների վարձատրությունն այսօր այնքան էլ չի համապատասխանում զինվորական–ծառայողական գործառույթների բարդությանը, կարևորությանը, լարվածությանը, ծառայողական պարտականությունների հատուկ բնույթին, ինչը բավականին հարվածում է զինվորական ծառայության վարկանիշին և որակյալ կադրերով զինված ուժերի համալրման գործընթացին: Զինծառայողի մարտունակությունը սկսվում է ընտանիքից, որի պարագայում, իհարկե, անթույլատրելի է զինծառայողին սոցիալական ծանր բեռի տակ թողնելը: Ռազմական անվտանգության ապահովման համակարգում անթույլատրելի է սոցիալական վիճակից, տիրող անարդարությունից

դժգոհ, ծառայության նկատմամբ անտարբեր «հայրենիքի պաշտպանի» առկայությունը:

Հայ սպան պետք է լինի ազգային գաղափարախոսության կրողը, տարածողը, մարմնացումը: Միաժամանակ նա պետք է հասարակության կողմից ընկալվի որպես կրթվածության, ազնվության, պատվախնդրության խորհրդանիշ: Պետությունն ու հասարակությունը պետք է պայմաններ ստեղծեն, հնարավորություն տան բանակին շուտափույթ ազատվել բոլոր նրանցից, ովքեր բանակ են մտել ոչ թե սրտի կանչով, հայրենիքին ծառայելու մղումով, այլ տաքուկ անկյուն գտնելու, բարձր թոշակ ստանալու ակնկալիքով: Զինվորական համազգեստը նույնպես պետական դրոշին համարժեք խորհրդանիշ է և դրա անհարգի կրումը հավասարազոր է հանցագործության՝ ընդդեմ պետական խորհրդանիշների: Եվ հակառակը, պետության կողմից զինվորականների բարձր գնահատումը միշտ էլ վճռականություն ու եռանդ է հաղորդում նրանց, զորեղ ազդակներ տալիս բանակաշինության գործընթացի կատարելագործման համար, որի իմաստով խաղաղ պայմաններում զինվորականների սխրանքները չպետք է զիջեն մարտադաշտում կատարվածին: Բարեփոխումների համատեքստում երկրի ռազմական ոլորտի ղեկավարությունը շարունակելու է զարգացնել պատերազմի և ժամանակի փորձությունը բռնած լավագույն ավանդույթները՝ զինված ուժերը դիտարկելով որպես հայ ժողովրդի կյանքի, պետության բարգավաճման ու սերունդներին հզոր հայրենիք ժառանգելու երաշխավոր [8]:

ՀՀ զինված ուժերում զինծառայողների ռազմական կրթությունը բավականին երկար ժամանակ կազմակերպվում և իրականացվում էր ընթացիկ իրավական ակտերի, այդ թվում՝ ՀՀ կառավարության որոշումների և պաշտպանության նախարարի հրամանների հիման վրա: Ընդհանուր հայեցակարգային մոտեցման բացակայության պայմաններում՝ Հայաստանի կրթական համակարգի բաղկացուցիչ մասը կազմող ռազմակրթական համակարգը զարգանում էր նվազ տեմպերով, ինչը դժվարություններ է առաջացնում զինված ուժերի սպայական և ենթասպայական կազմերի կադրային ճկուն քաղաքականության, նրանց որակավորման բարձրացման գործընթացում: Նկատի ունենալով, որ պաշտպանական բարեփոխումների համատեքստում ռազմական կրթության համակարգի զարգացումը գերակա խնդիր է՝ իրավական ամրագրման ենթարկվեցին միասնական հայեցակարգային մոտեցումները, որոնք հնարավորություն կտան էլ ավելի արդյունավետ իրականացնել բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստումն ու առաջխաղացումը:

Պաշտպանական բարեփոխումների շրջանակում 2010 թվականի մարտին ձևավորվեց միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի նպատակն էր մշակել ՀՀ ռազմական կրթության հայեցակարգի նախագիծը: Խմբի կազմում ընդգրկվել էին ներկայացուցիչներ ՀՀ ՊՆ և ԶՈւ ԳՇ շահագրգիռ ստորաբաժանումներից, այդ թվում՝ ռազմաուսումնական հաստատություններից, ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտից, ինչպես նաև՝ փորձագետներ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայից, ՀՀ կրթության և գիտության նախարարությունից, Երևանի պետական համալսարանից, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանից, ինչպես նաև Խ. Աբովյանի անվան հայկական պետա-

կան մանկավարժական համալսարանից: Աշխատանքային խմբի պատրաստած նախագիծը պարբերաբար քննարկվել է ՀՀ ՊՆ և ԶՈւ ԳՇ վարչություններում, իսկ 2011 թվականի ընթացքում՝ նաև Հայաստան այցելած ՆԱՏՕ–ի փորձագիտական խմբերի հետ: Արդյունքում ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացան և հաստատվեցին երեք կարևոր փաստաթղթեր՝ ՀՀ ռազմական կրթության հայեցակարգը, սպայական կազմի պատրաստության փուլերի ճանապարհային քարտեզը և հայեցակարգի ապահովման միջոցառումների ծրագիրը [9]:

ՀՀ ռազմական կրթության հայեցակարգով սահմանվում է հայեցակարգի հասկացությունը՝ ամրագրելով, որ հայեցակարգը ռազմական կրթության նպատակների և խնդիրների նկատմամբ պաշտոնական մոտեցումների համակարգ է: Նախանշվում են ռազմական կրթության գործող համակարգի բարեփոխումների ուղղությունները, մասնավորապես՝ ռազմական կրթության շարունակականությունը, եռաստիճան կրթական համակարգի ներդրումը, փոխհամագործակցությունը ազգային և միջազգային ուսումնական հաստատությունների հետ (ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական), գիտական ու գիտատեխնիկական կադրերի պատրաստումը, վերապատրաստումը, որակավորումը, ռազմական կրթության համակարգում ենթասպայական կազմի կրթության ներառումը, ինչպես նաև նախազորակոչային պատրաստության դիտումը՝ որպես սպայական պատրաստության փուլ: Ամրագրվում են նաև հայեցակարգի նպատակը և խնդիրները, այդ թվում՝

1) ռազմական կրթության համապատասխանեցումը պետական կրթական չափորոշիչների պահանջներին,
2) ռազմական կրթության համակարգի զարգացման և կատարելագործման ուղիների նախանշումը,
3) պաշտոնական առաջխաղացման ուղեգծի նախանշումը,
4) ռազմական կրթության փուլերի շարունակականության և ներդաշնակության ապահովումը,
5) ռազմակրթական գործընթացի կառավարման և ռազմական կրթության զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորման նախանշումը:

Հայեցակարգում հստակեցվում է, որ ռազմական կրթության համակարգը ՀՀ ընդհանուր կրթական համակարգի բաղկացուցիչ մասն է և ապահովում է շարունակական կրթության իրականացման համար անհրաժեշտ կրթական միջազգային համագործակցություն՝ լայնորեն կիրառելով ժամանակակից նորարական կրթական և տեղեկատվական տեխնոլոգիաները: Սահմանվում են սպայական կազմի պատրաստության փուլերը (նախազորակոչային պատրաստության, կրտսեր, ավագ և բարձրագույն սպայական կազմերի կրթության փուլեր), ինչպես նաև ենթասպայական կազմի կրթությունը՝ որպես մեկ օղակում սերժանտների, ավագների ու ենթասպաների պատրաստության երաշխիք: Հայեցակարգում տեղ են գտել նաև առանձին դրույթներ, որոնք վերաբերում են գիտական և դասախոսական անձնակազմի պատրաստմանը, վերապատրաստմանն ու որակավորման բարձրացմանը, ազգային և միջազգային ուսումնական հաստատությունների համագործակցությանը՝ ՀՀ զինված ուժերի համար անհրաժեշտ մասնագետների պատրաստման, օտարերկրյա պետության գիտակրթական ներուժի օգտագործման, ինչպես նաև դաշնակից և գործընկեր

պետությունների զինված ուժերի հետ փոխգործունակության ապահովման նպատակով, միջգերատեսչական ձևաչափով պաշտպանական–անվտանգային քաղաքագիտական բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ կրթության կազմակերպմանը:

Այդպիսով հայեցակարգով նախանշվեցին ռազմական կրթության գործող համակարգի բարեփոխումների հիմնական ուղղությունները, մասնավորապես՝ ռազմական կրթության շարունակականությունը, եռաստիճան կրթական համակարգի ներդրումը, փոխհամագործակցությունը, գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստումը, վերապատրաստումը, որակավորումը, ռազմական կրթության համակարգում ենթասպայական կազմի կրթության ներառումը, ինչպես նաև նախազորակոչային պատրաստության դիտումը՝ որպես սպայական պատրաստության փուլ: Երաշխավորվեց յուրաքանչյուր պաշտոնի ու համապատասխան կրթական չափանիշների տրամաբանական կապը, բարձրացվեց հայաստանյան քաղաքացիական բարձրագույն ուսումնական հաստատությունների և արտասահմանյան ուսումնական հաստատությունների դերն ու նշանակությունը ՀՀ ԶՈՒ սպայական կադրերի պատրաստման, արտերկրի գիտակրթական ներուժի կիրառման, ինչպես նաև դաշնակից և գործընկեր պետությունների զինված ուժերի հետ փոխգործունակության ապահովման գործում:

Զինծառայողի պատրաստումը, վերապատրաստումն ու որակավորման բարձրացումը, ինչպես նաև պաշտոնեական առաջխաղացումը՝ ըստ զբաղեցրած պաշտոնի և կոչման, անհրաժեշտ պահանջ են դառնում այդ փաստաթղթով: Արդյունքում, բարձրագույն ռազմական կրթությունն իրենից ներկայացնելու է ոչ թե մեկ քայլից բաղկացած կրթական գործունեություն, այլ՝ համակարգ, որը բաղկացած է մի քանի անբաժան, շարունակական կրթական տարրերից՝ դասընթացներից, վերապատրաստումներից, որտեղ մեկը հիմնվում, ներկառուցվում է մյուսի վրա և որոնց կապող օղակն են հանդիսանալու զինծառայողների ծառայության ընթացքում ձեռքբերված փորձն ու գիտելիքները: Սահմանվեցին նաև զինված ուժերի սպայական կազմի պատրաստության փուլերի ճանապարհային քարտեզը և ռազմական կրթության հայեցակարգի ապահովման միջոցառումների ծրագիրը: Որպես վերջնական արդյունք՝ նպատակ է հետապնդվում ներդնել ՀՀ ԶՈՒ ենթասպայական (պրոֆեսիոնալ սերժանտական) կազմի կրթության և վարժանքների, ինչպես նաև ՀՀ ԶՈՒ սպայական կազմի ակադեմիական կրթության համակարգը՝ ՀՀ քաղաքացիական բարձրագույն կրթության չափանիշներին և Բոլոնիայի գործընթացին համահունչ:

Առաջիկա ժամանակաշրջանում պետք է ունենալ զինվորական կադրերի պատրաստման այնպիսի կատարյալ համակարգ, որը, մի կողմից, լրիվ բավարարի զինված ուժերի պահանջարկը, ամբողջությամբ օրակարգից հանելով դրսում կադրերի պատրաստման անհրաժեշտությունը (իհարկե, խոսքը չի գնում առանձին նեղ մասնագիտությունների գծով սահմանափակ թվով մասնագետների պատրաստմանը, որի իրականացումը տեղում տնտեսապես աննպատակահարմար է), մյուս կողմից, իր որակական բարձր մակարդակի շնորհիվ ԱՊՀ–ի և արտասահմանյան որոշ երկրներից Հայաստանում կադրեր պատրաստելու շահագրգռություն և ցանկություն առաջ բերի: Անհրաժեշտ է նաև կատարելագործել կադրերի նշանակ-

ման, որակավորման և առաջխաղացման համակարգը, որպեսզի բանակային միջավայրում իսպառ բացառվի հովանավորչությունը, ծառայության անհրաժեշտ բոլոր որակներին լիարժեք չհամապատասխանող անձանց առաջխաղացումը, զինծառայողների շրջանում մշտապես խրախուսվի ինքնակատարելագործման, մասնագիտական որակավորման բարձրացման ձգտումը: Դրա համար էլ փորձառու, երիտասարդ և եռանդուն զինվորական մասնագետների ներդաշնակ զարգացումը՝ հայ զինվորականության լավագույն ավանդույթների պահպանմամբ և բազմապատկմամբ, հանդիսացել և միշտ էլ հանդիսանալու է ՀՀ զինված ուժերի բարեփոխումների անհրաժեշտ ուղեկիցը, քանզի հայոց բանակը կարող է լինել հզոր և մարտունակ միայն վերջինիս կազմում ունենալով զինվորականի պատիվը պահող ու պաշտող նվիրյալներ: Ներկայումս ՀՀ զինված ուժերի զարգացման հիմնական ուղենիշներում հատկապես կարևորվում է զինվորականության կրթական ու բարոյահոգեբանական որակների բարելավումը՝ առաջնային նշանակություն տալով այն զինծառայողի կերպարին, ով առաջնորդվում է էթիկական նորմերով, լիարժեքորեն օգտագործում է իրեն տրված իրավունքները և հստակորեն կատարում իր պարտականությունները [10]:

Ամփոփման նպատակով հարկ է կրկին նշել, որ, իսկապես, յուրաքանչյուր բանակի վերակառուցման գլխավոր օբյեկտն ու սուբյեկտը նախևառաջ զինծառայողներ են՝ որպես զինված ուժերի առաջնային և կարևորագույն տարր, ավանդույթների, փորձի, մարտական կարողությունների ու բարոյական ոգու կրող: Ուստի, անհրաժեշտ է բարեփոխումների գործընթացում ապահովել նրանց ընտրության, պատրաստման, տեղաբաշխման, հոգևոր ու գաղափարական դաստիարակության, մասնագիտական կատարելագործման, սոցիալական ապահովման այնպիսի համակարգ, որի միջոցով հնարավոր լինի ձևավորել նոր որակի հայ զինվորականին՝ հայրենիքին անսահման նվիրված, ընդհանուր և ռազմական խոր գիտելիքներով ու բարձր կուլտուրայով, ինքնուրույն որոշումներ ընդունելու ունակ: Հատուկ դեր է հատկացվում սպայական կորպուսին, որի համար ծառայությունը դառնում է կյանքի ուղեկից, կենսակերպ, հասարակական և ֆիզիկական գոյության միջոց ու նպատակ:

Քաղաքացին պետք է ձգտի զինծառայող դառնալ ոչ թե այն պատճառով, որ չի գտնում իր տեղը քաղաքացիական կյանքում, այլ որովհետև զինվորական ծառայությունը պատվաբեր է և ունի բարձր սոցիալական կարգավիճակ: Միաժամանակ բանակը պետք է հնարավորություն ունենա ընտրելու արժանավորին, լավագույնին, ընդունակին և ոչ թե զինված ուժերի շարքերը համալրվի առաջին պատահածով: Հենց այդ իսկ նկատառումներով էլ պետությունը պետք է ձեռնարկի բոլոր միջոցները, որպեսզի զինվորականի մասնագիտությունը համարվի գրավիչ, պատվաբեր և նախընտրելիներից մեկը: Որպես օրինակ կարելի է մեջբերել, որ Ռ. Ռեյգանի ԱՄՆ նախագահ ընտրվելու նախաշեմին սպայի մասնագիտությունը իր վարկանիշով ԱՄՆ–ում նախընտրելի մասնագիտությունների ցանկում գտնվում էր հինգերորդ տասնյակում, իսկ նրա կառավարման վերջին տարում՝ բարձրացավ երկրորդ տեղը:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 24.06.2013 թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի շնորհավորական խոսքը ՀՀ անկախության 20–ամյակի առթիվ ՀՀ զինված ուժերի զորահանդեսի ժամանակ, 21.09.2011թ., http://www.president.am
2. ՀՀ կառավարության 1994 թվականի մայիսի 24–ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության բազմաբնույթ ռազմական հրամանատարական ուսումնարան ստեղծելու մասին» թիվ 279 որոշում, http://www.arlis.am
3. ՀՀ կառավարության 1994 թվականի մայիսի 20–ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմաօդային ուժերի թռիչքատեխնիկական ռազմաավիացիոն ուսումնարանի կարգավիճակի մասին» թիվ 447 որոշում, http://www.arlis.am
4. ՀՀ կառավարության 1998 թվականի մայիսի 16–ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության բազմաբնույթ ռազմական հրամանատարական ուսումնարանը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ինստիտուտի վերակազմավորելու մասին» թիվ 24 որոշում, http://www.arlis.am
5. ՀՀ կառավարության 1994 թվականի մայիսի 19–ի «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների՝ պահեստազորի սպաների ծրագրով ռազմական պատրաստության հիմնադրույթները և այդ բուհերի ցանկը հաստատելու մասին» թիվ 232 որոշում, http://www.arlis.am
6. ՀՀ Կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 15–ի «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 3–ի թիվ 681–Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1716–Ն որոշում, ՀՀ ՊՏ 2005, հմ. 71 (443), http://www.arlis.am
7. ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 7–ի նիստում այդ փաստաթղթերը հավանության արժանացան և հաստատվեցին ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ, http://www.arlis.am
8. **Քոթանջյան Հ.Ս.,** Պաշտպանական բարեփոխումների ռազմավարություն // Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, էջ 719–722:
9. **Օհանյան Ս.,** 21–րդ դարի բանակը, Եր., Տիգրան Մեծ, 2007, էջ 257:
10. **Օհանյան Ս.,** Հայկական բանակի 20–ամյա տարեգրությունը /համառոտ ուրվագիծ/, Եր., 2012, էջ 327

ПОЛИТИКО–ПРАВОВОЕ КОНЦЕПТУАЛЬНОЕ РАЗВИТИЕ СИСТЕМЫ ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

КОЧАРЯН ТИГРАН

Начальник отдела юридического управления Министерство Обороны РА,
Советник 1–ого класса, доктор политических наук, доцент

В рамках формирования системного военного мышления с учетом своих национальных интересов важное место отводится модернизации военно–образовательной системы, повышению эффективности образовательных программ и учебных планов. Образование представляет собой процесс формирования фундаментальных, в том числе базовых специальных знаний, способности аналитически мыслить. Сфера военного образования и управления личным составом считается первичным фактором обеспечения функционирования оборонной системы и боеспособности ВС.

В этом контексте рассмотрена история развития системы военного образования в ВС РА и анализируются основные направления ее развития. Реформирование системы военного образования осуществляется поэтапно по отдельным направлениям с расширением спектра изменений на основе достигнутых положительных результатов. Армянский офицер должен быть носителем и распространителем национальной идеологии. Одновременно он должен восприниматься общественностью как символ честности и образованности.

Дата представления статьи: 24.06.2013 г.

POLITICAL AND LEGAL CONCEPTUAL DEVELOPMENTS OF THE MILITARY EDUCATION SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA

TIGRAN KOCHARYAN

Head of the Branch of the Law Department of the Ministry of Defence of RA,
1–st Class Adviser,
Doctor of Political Sciences, Associate Professor

Within the framework of shaping systemic military thinking with regard for its national interests an important part is assigned to the modernization of the military education system, the increase of the effectiveness of educational programs and curricula. The education is process of forming fundamental, including basic special knowledge, ability to think analytically. The field of military education and personnel management is regarded as the primary factor for ensuring the defense system and combat capability of the Armed Forces.

In this context, the history of development of the military education system in the RA Armed Forces is examined, and the main directions of its development are analyzed. The reforming of the system of military education is gradually under way in separate areas by broadening the range of changes based on the positive results. The Armenian officer should be the bearer of the national ideology. At the same time, he must be perceived by the public as the symbol of honesty and education.

Article submission date: 24.06.2013